



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Հրատարակութեան խնդրանքով

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐ-  
ՀՈՒՐԴԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Գլխվկէնտի մէջ --Օհայօ-- նոյեմբեր 3-7, 1981, կայացած Ամերիկայի եկեղեցիներու Ազգային Խորհուրդի համագումարին Հայաստանեայց եկեղեցւոյ Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերու կողմէ մասնակցեցան Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Արժշ. Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշժեան --նիւ Եորք--, Արժշ. Տ. Աննակ Ա. Քհնյ. Գասպարեան --նիւ Ճրրգի-- եւ Արժշ. Տ. Տիրան Քհնյ. Փափագեան --Գլխվկէնտ-- վերջինս փոխանորդաբար:

Համագումարը քուէարկութեամբ որդեգրեց Խորհուրդի Սահմանադրութեան նախաբանի եւ նպատակի վերաբերեալ բարեփոխումներ:

Հայ եկեղեցւոյ պատգամաւորները ներկայ եղան հրապարակային ընթրիքի մը, ուր մեծարուեցաւ վերջացող եռամեակին իբր նախագահ ծառայած վեր. Տոքթ. Ուիլերմ Հաուրթոմ --Փրինսթըն, ն.ճ.--:

Համագումարի վերջին երեք օրերուն նշուեցաւ 30-ամեակը Ամերիկայի եկեղեցիներու Ազգային Խորհուրդին: Անոր հաստատումը Գլխվկէնտի մէջ 1950ի աշնան զուգահիստէ կը ծիւնամարտիկի մը, ինչպէս ցոյց կու տային ոգեկոչման լուսապատկերները: Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Արժշ. Տ. Տիրան Քհնյ. Փափագեան բաժին առին տարեդարձի հրապարակային կարգ մը հանդիսութեանց մէջ: Առաջնորդ Սրբազան Հայրը եւ երեք քահանայ հայրերը զանազան յանձնաժողովներու նիստերուն մասնակցեցան եւ ներկայ եղան Խորհուրդի 30-ամեակին առնչութեամբ ծրագրուած դասախօսական ասուլիսներուն --սեմինար--:

Երեքշաբթի գիշեր, նոյեմբեր 3, Գլխվկէնտի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ ծխական Խորհուրդի մասնաւոր մէկ ժողովին նախագահեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ժողովը տեղի ունեցաւ համայնքի թեմական պատգամաւոր Տիկ. ֆլարէնս Կէօքճեանի հիւրընկալ տան մէջ:

Շաբաթ գիշեր, նոյեմբեր 7, Առաջնորդ Սրբազան Հայրը ընթրիք եւ խորհրդակցական ժողով ունեցաւ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին, ծխական Խորհուրդին եւ եկեղեցական կազմակերպութեանց վարչութեանց հետ:

Իսկ Կիրակի, նոյեմբեր 8, Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան պատարագեց  
եւ քարոզեց Ս. Գրիգոր նարեկացի Եկեղեցւոյ մէջ, օժանդակութեամբ ծուխի  
հովիւ Արժշ. Տ. Տիրան Բնյ. Փափագեանի: Յաւարտ Ս. Պատարագի, Եկեղեցւոյ  
սրահին մէջ, ճաշկերոյթի ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հայրը տեղեկութիւններ  
տուաւ էջումէնիք շարժումի եւ համագումարի մասին:

Համագումարի օրերուն ազատ երեկոյ մը՝ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ երեք  
քահանայ հայրերը այցելութիւն տուին համայնքի բարերար անդամ եւ Թեմական  
Խորհուրդի նախկին վաստակաւոր ատենապետ Տիար Երուանդ Աղաճանեանին, անոր  
տան մէջ:

Դեկտեմբեր 15, 1981  
Նիւ Եորք, Ն.Ն.